

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՐԱԶԻԿԻ

ԽՈՐԱՍԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ

Ժ.02.06-«ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանագիտություն)»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2015թ.

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Լ. Խաչիկյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Շահլա Շարիֆի (Իրան)

Առաջատար կազմակերպություն՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. փետրվարի 23-ին, ժ. 15:00-ին: ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հունվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար, Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ն.Ս.Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից պարսկերենը հարուստ է բարբառներով ու խոսվածքներով, որոնք ամփոփում են լեզվի տարածական առանձնահատկությունները հնչյունական, քերականական համակարգերում և բառապաշարում:

Խորասանի բարբառը պարսկերենի հնագույն բարբառներից է, որն ընդգրկում է ոչ միայն գործածության ժամանակով, այլև աշխարհագրական տարածքով և լեզվակիրների թվով. այն մի ընդարձակ տարածքի բազմամիլիոն բնակչության բարբառն է:

Աշխատանքում ներկայացված լեզվական ողջ նյութը հավաքվել է Խորասան նահանգում կատարված դաշտային գրառումների միջոցով: Լեզվանյութը մեծ մասամբ գրանցվել է Մաշհադի և նրան հարակից հին թաղամասերի (Նոդան, Թորդաբե) մեծահասակ բնակիչների, մասնավորապես Մաշհադի խոսվածքով ստեղծագործող բանաստեղծ Ղասեմ Ռաֆիայի հետ զրույցների, ինչպես նաև Խորասանի տարբեր խոսվածքներով գրված գեղարվեստական ստեղծագործություններն ուսումնասիրելու ընթացքում:

3-րդ դարում Իրանի լեզվական արեալում հիմնականում տարածված էին երկու լեզուներ՝ միջին պարսկերենն ու պարթևերենը: Այս երկու լեզուներից մեկը գործածվում էր Իրանի հարավում, իսկ մյուսը՝ հյուսիսում: Մանիքեական տեքստերի համաձայն՝ Խորասանի լեզուն եղել է պարթևերենը:¹

Սասանյանների չորսդարյա տիրապետության շրջանում իրանական լեզվական արեալում կատարվում են զգալի տեղաշարժեր: 4-րդ դարից սկսած սեպագիր արձանագրությունների լեզուն փոխվում է փարսիի (պարսկերենի), որն աստիճանաբար ընդգրկում է նաև երկրի հյուսիսը, որի հետևանքով Խորասանում պարթևերենը զիջում է իր դիրքերը՝ արագորեն կորցնելով պաշտոնական լեզվի կարգավիճակը: Այժմ Խորասանում հին բարբառներից որևէ մեկը չի պահպանվել, և Խորասանի բարբառն էլ հենց պարսկերենի տեղական բարբառներից մեկն է:²

Ի տարբերություն հարավում տարածված պարսկերենի՝ հյուսիսի պարսկերենը ձեռք է բերում լեզվական որոշ առանձնահատկություններ՝

¹ Lāzār Ž. (tarjome az Bahreyni) Šeklgiri-e zabān-e fārsi, Enteshārāt-e Hermes, Tehrān, 1387 (2005), pp. 12-14:

² Lāzār Ž., Pārsi va dari: noktehāye tāze, Tehrān, 1387 (2005), pp. 199-208:

ներառելով տեղի խոսվածքների, հատկապես պարթևերենի բազմաթիվ բառեր: Արդեն Մասանյան դինաստիայի անկման տարիներին հյուսիսի և հարավի պարսկերենների միջև տարբերությունն առավել ակնհայտ է դառնում: Բսկ հյուսիսում ձևավորված պարսկերենը նաև անվամբ է տարբերակվում՝ կոչվելով դարի, այսինքն՝ արքունիքի լեզու:

Քննվող բարբառի խոսվածքների (Ղուչանի, Մաշհադի, Քաշմարի, Թորբաթ-է Հեյդարիեի, Ֆերդոուսի, Ղայենի) ուսումնասիրությունը հատկապես կարևոր է, քանի որ պարսից լեզվի ներկայությունը Խորասանի տարածաշրջանում մշտապես կայուն է եղել: Բսլամի ընդունումից հետո միջին պարսկերենը գլխավորապես Խորասանի տարածքում է պահպանել իր կենսունակությունը և ֆարսի դարիի տեսքով հասել մինչև մեր օրերը:³

Բսլամական դարաշրջանի առաջին հարյուրամյակներին պարսկերենը, ունենալով բազմաթիվ տեղական խոսվածքներ, չէր ընդհանրացել որպես միասնական լեզու: Պարսկերենի բարբառները բաժանվում էին երկու հիմնական խմբի. առաջին խմբում ընդգրկված էին Իրանի հյուսիս-արևելքում (Խորասան, Մավերանահր և ներկայիս Աֆղանստանի հյուսիսային շրջանները) խոսվող բարբառները, իսկ երկրորդ խմբում՝ հարավի (Խուզեստանից մինչև Սիստան ընկած տարածքները) բարբառները: Հյուսիսարևելյան բարբառների հնագույն գրավոր հուշարձանները վկայված են արաբատառ գրական տեքստերի տեսքով. ընդ որում՝ հարկ է նշել, որ պարսից գրականությունը սկզբնավորվել է հենց Խորասանում և Մավերանահրում:⁴ Հենց այս շրջաններում՝ Խորասանում և Մավերանահրում, 9-10-րդ դդ. ձևավորվում է դարի լեզուն: Ըստ ամենայնի՝ այս լեզվի հիմքում ընկած է Խորասանի լեզուն: Արդեն 12-րդ դարում դարին դառնում է Իրանի, Աֆղանստանի և Միջին Ասիայի ժողովուրդների մեծ մասի ընդհանուր գրական լեզուն:⁵

Ֆարսի դարին՝ որպես գրական լեզու, շուրջ հազար տարի վերոնշյալ տարածքներում պահպանել է իր միաձևությունը: Ֆերդոուսիի, Աթթարի, Ռուդաքիի, Նասեր Խոսրովի, Անսարիի, Սաադիի, Հաֆեզի, Խաղանիի, Նեզամիի, Մոլավիի, Բահարի և մյուսների ստեղծագործությունները հաստատում են ֆարսի դարիի՝ գրական, գիտական և պաշտոնական լեզու լինելու իրողությունը: Ժամանակակից պարսկերենի և Իրանի տարբեր շրջաններում տարածված բարբառների միջև առկա տարբերությունները

³ Šālči A., Farhang-e guyeši-e Xorāsān-e bozorg, Našr-e Markaz, Tehrān, 1368 (1989), p.3:

⁴ Lāzār Ž., Pārsi va dari: nokteḥāye tāze, Tehrān, 1387 (2005), 199-201:

⁵ Оранский И. Введение в иранскую филологию, Изд-во восточной лит-ры, Москва, 1960, стр. 286-297:

հիմնականում հնչունական և բառապաշարային բնույթի են: Այդ շեղումները միջին դարերում տարածված տեղական լեզուների ազդեցության հետևանք են, օրինակ՝ Խորասանի բարբառը կրել է պարթևերենի ազդեցությունը, Կենտրոնական Ասիայում տարածված պարսկերենը՝ սողդերենի, Սիստանում սակերենի:⁶

Խորասանում ֆարսի դարին, Իրանի արևմտյան և հարավային շրջանների համեմատ, նույնիսկ իսլամի տարածումից հետո կարողացել է պահպանել իր դերն ու նշանակությունը, քանի որ այդ տարածաշրջանը հեռու է եղել իսլամի տարածման կենտրոնից (Դամասկոս, այնուհետև՝ Բաղդադ)՝ զերծ լինելով լեզվական ազդեցություններից:⁷

Սողադասի Շամին իր «Ehsan ol Taqāsīm» 1321(1942) գրքում ևս հաստատում է, որ Մեծ Խորասանի բնակչության լեզուն փարսի դարին է:⁸ Ֆրանսիացի գիտնական Ժ. Լազարը 1990թ. տպագրված «Pārsi va dari: noktehāye tāze» («Փարսի և դարի. նոր նկատառումներ») հոդվածում նշում է, որ դարին Խորասանի և Արևելքի (Mašreq), ինչպես նաև Բալխի (ներկայիս Աֆղանստանի տարածքում) ժողովրդի խոսակցական լեզուն է: Ռուս իրանագետ Վ. Իվանովը, անդրադառնալով պարսից լեզվի զարգացման փուլերին, նոր պարսկերենը (դասական պարսկերեն) բաժանում է երկու ճյուղի՝ տաջիկերեն և խորասանյան, որից սերում են դարին և ժամանակակից պարսկերենը:⁹

Այս բարբառի քննությունը արժեքավոր նյութ կտա ժամանակակից պարսկերենի պատմական բարբառագիտությանը: Շատ բաներ, որոնք տարբեր դարաշրջաններում պարսից լեզվի բառապաշարի մաս են կազմել, այսօր առօրյա խոսքում գրեթե մոռացվել են, մինչդեռ դրանք պահպանվել ու գործածվում են Խորասանի խոսվածքներում: Օրինակ, Ղայենի տարածաշրջանի բնիկ ազգաբնակչության բառապաշարում կան այնպիսի բաներ, որոնք հատուկ են 4-5-րդ դարերի պարսկերենին: Նույնիսկ Ղայենի որոշ գյուղերի խոսվածքներում գործածվող բաները բավականին մեծ նմանություն ունեն պահլավերենին:¹⁰

⁶ Bāqeri M., Tārix-e zabān-e fārsi, Našr-e Qatre, Tehrān, 1386 (2007), pp. 114-115:

⁷ Xānlāri N., Tārix-e zabān-e fārsi, Našr-e Now, jelde 1-2-3, Tehrān, 1369 (1990), pp. 280-281:

⁸ Mašhadi M. Atlās-e zabāni-e šahresān-e Dargez, Dānešgāh-e Ferdowsi-e Mašhad, Mašhad, 1356 (1957), p.31:

⁹ Иванов. В. Учебник персидского языка, Издательство: Институт стран Азии и Африки МГУ, Москва, 2000, с.3:

¹⁰ Saidzādeh M., Tārix-e Qāyen, Enteshārāt-e Qom, Mašhad, 1371 (1992), p.45

Խորասանի բարբառում դեռևս կան միջին պարսկերենին հատուկ հնչյուններ, որոնք գրական պարսկերենում կա՛մ վկայված չեն, կա՛մ էլ փոխարինվել են մեկ այլ հնչյունով: Օրինակ՝ Խորասանի բարբառի բազմաթիվ բառերում բառավերջում հանդիպում է **a** կարճ ձայնավորը, մինչդեռ այն գրական պարսկերենում առկա է միայն **va-ն** և **na-ն** բառերում:¹¹

Ներկայում Խորասանի բարբառակիրներն իրենց բառանյութի մի ստվար հատված փոխարինում են պարսկերենում առավել գործածական հումանիշ բառերով. Ավելի երիտասարդ սերնդի խոսքը զգալիորեն տարբերվում է ավագ սերնդի գործածած բառապաշարից: Ուստի վտանգ կա, որ մի քանի սերունդ հետո Խորասանի բարբառն աստիճանաբար կվերանա՝ տեղը զիջելով Իրանում ընդհանրական դարձող Թեհրանի բարբառին:

ԽՈՐԱՍԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

«**Xvarāsān**» բառը միջին պարսկերենում նշանակում է «արևելք, արևի երկիր»: Պատմականորեն Խորասանն ավելի մեծ տարածք է զբաղեցրել՝ ընդգրկելով ներկայիս Աֆղանստանի և Թուրքմենստանի զգալի մասը: Հնագույն Պարթևստանի տարածքը համապատասխանում է ներկայիս Իրանի հյուսիսարևելյան նահանգների՝ Խորասանի և Մազանդարանի, ինչպես նաև Թուրքմենստանի հարավարևմտյան շրջաններին:¹²

Խորասանի քաղաքների աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, տնտեսական իրավիճակի վերաբերյալ արժեքավոր պատմական տեղեկություններ է հաղորդում 14-րդ դարի արաբ հայտնի ճանապարհորդ Իբն Բատտուն:¹³

Խորասանի նահանգը մինչև 2005 թվականն Իրանի ամենամեծ նահանգն էր, որն այնուհետև, բաժանվելով երեք մասի, կազմում է ներկայիս Հյուսիսային Խորասան, Խորասան-ե Ռազավի և Հարավային Խորասան նահանգները: Խորասան նահանգի ընդհանուր մակերեսը շուրջ 242.673 քառ.կմ է: Հյուսիսից և հյուսիս-արևելքից այն սահմանակցում է Թուրքմենստանին, արևելքից՝ Աֆղանստանին, հարավից՝ Սիստան և

¹¹ Eshaqi E., Barresi va towsif-e guyeš-e Kāšmar, Dānešgāh-e Ferdowsi Mašhad, Mašhad, 1379 (2000), p.3:

¹² Bāqbidī H., Dastur-e zabān-e pārti (Pahlavi aškāni), Našr-e āsar, Tehrān, 2002, p 11:

¹³ Ибрагимов Н., Ибн Баттута и его путешествия по Средней Азии, Издательство «Наука», Москва, 1988, стр.21:

Բելուջիստան և Քերման, իսկ արևմուտքից և հյուսիս-արևմուտքից՝ Յագո, Մեմնան և Գոլեստան նահանգներին:¹⁴

Որպես ատենախոսության ուսումնասիրության առարկա ընտրել ենք պատմական Մեծ Խորասանի՝ հյուսիսից հարավ ընկած բարբառային կենտրոններում՝ Ղուչանում, Մաշհադում, Թորբաթ-է Հեյդարիեում, Ֆերդոուսում, Քաշմարում և Ղայենում, տարածված խոսվածքները:

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանն իր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ բարբառների դասակարգման հետևյալ սահմանումն է տալիս. «Եթե ընտրված յուրաքանչյուր բարբառախոս վայր մյուսներից տարբերվում է առնվազն մեկ-երկու հատկանիշով, հետևաբար, այն կարող է կոչվել խոսվածք. Խոսվածքները կարող են միավորվել ենթաբարբառների, բարբառների և բարբառախմբերի մեջ, ընդ որում, մեկ խոսվածքը ևս կարող է ինքնին ներկայացնել այդ միավորները, եթե ունի մյուսներից տարբեր հատկանիշների համապատասխան ցուցիչներ»:¹⁵

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես Իրանում, այնպես էլ Արևմուտքում Խորասանի բարբառի վերաբերյալ մինչ այժմ կատարված ուսումնասիրություններում լիարժեք և համակողմանի քննված չեն խնդրո առարկա բարբառի հնչյունաբանության, ձևաբանության և բառապաշարի հարցերը: Արևմտյան գիտնականների՝ բարբառի վերաբերյալ կատարած ուսումնասիրությունները սահմանափակվում են ընդամենը մի քանի հոդվածներով, իսկ Իրանում Խորասանի որոշ խոսվածքների ուսումնասիրությունները կատարվել են մագիստրոսական աշխատանքի մակարդակով՝ մասնակի ներկայացնելով այս կամ այն խոսվածքի հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները:

Ուսումնասիրության առարկա բարբառի խոսվածքների (Ղուչանի, Մաշհադի, Քաշմարի, Թորբաթ-է Հեյդարիեի, Ֆերդոուսի, Ղայենի) կարևորությունն այն է, որ պարսից լեզուն Խորասանի տարածաշրջանում միշտ կայուն ներկայություն է ունեցել: Իսլամի ընդունումից հետո միջին պարսկերենն ավելի շատ Խորասանի տարածքում է պահպանել իր կենդանությունը և ֆարսի դարիի տեսքով հասել մեր օրերը:

Թեմայի ուսումնասիրությունն արդիական է այն տեսանկյունից, որ հին և միջին պարսկերեններին բնորոշ հնչյունական և քերականական մի շարք հատկանիշեր հատուկ են Խորասանի բարբառին, ուստի բարբառի

¹⁴Zendedel H., Ostän-e Khorāsän, Našr-e Irāngardän, Tehrän, 1377 (1998), p.29:

¹⁵Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան 1972, էջ 346:

համակողմանի նկարագրությունը կնպաստի պարսկերենի բարբառների հետագա ճշգրիտ դասակարգմանը, օգտակար կլինի իրանական բարբառների համեմատական ուսումնասիրության համար, ինչպես նաև հին պարսկերենի և միջին պարսկերենի ուսումնասիրությանն արժեքավոր նյութ կտա:

Այս բարբառի քննությունը մեծ արժեք ունի ժամանակակից պարսկերենի պատմական բարբառագիտության համար: Շատ բառեր, որոնք տարբեր դարաշրջաններում պարսից լեզվի բառապաշարի մաս են կազմել, այսօր առօրյա գործածության մեջ գրեթե մոռացվել են, սակայն դրանք դեռևս կենդանի են ու գործածվում են Խորասանի խոսվածքներում:

Բացի այդ Խորասանի բարբառի բառապաշարի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև հայերենի իրանական փոխառությունների և բարբառագիտական ուսումնասիրությունների համար, քանի որ բարբառի մի շարք բառեր, որոնք, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, գործածվում են հայերենի խոսվածքներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ատենախոսության նպատակն է Իրանի Խորասան նահանգում հավաքած դաշտային նյութերի, ինչպես նաև Մաշհադի «Ֆերդոսի» համալսարանում կատարած հետազոտական աշխատանքների հիման վրա կատարել Խորասանի բարբառի համաժամանակյա քննություն: Հետազոտությունն իրականացնելիս առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Գրանցել ու ներկայացնել ողջ բարբառային նյութը
- Առկա լեզվանյութը ենթարկել հնչյունական և քերականական համակողմանի վերլուծության
- Կատարել Խորասանի բարբառի և պարսկերենի հնչյունական ու ձևաբանական համակարգերի համեմատական քննություն
- Խորասանի բարբառի հիմնական բառապաշարը քննել համաժամանակյա և տարածամանակյա տեսանկյուններից համեմատելով հայերենի վաղ իրանական փոխառությունների հետ

Իրանագիտության մեջ խնդրո առարկա բարբառի վերաբերյալ մինչ այժմ համակողմանի, ամբողջական ուսումնասիրություն չի կատարվել: Առանձին խոսվածքների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները (Ռ. Ջոմորոդիանի «Դայենի խոսվածքը», Յ. Ռեզայիի «Բիրջանդի խոսվածքը» և այլն) չեն տալիս Խորասանի բարբառի սպառիչ պատկերը: Բարբառն ամբողջական ուսումնասիրության ենթարկելու նպատակով ընտրել ենք պատմական Խորասան նահանգի հյուսիսից հարավ ընկած բարբառային կենտրոններում տարածված

խոսվածքները (Ղուչանի, Մաշհադի, Թորբաթ-է Հեյդարիէի, Ֆերդոուսի, Քաշմարի, Ղայենի):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրանի Խորասան նահանգում կատարված դաշտային աշխատանքները, մասնավորապես՝ Մաշհադի հին թաղամասերում (Թորղաբե, Նողան) բնակվող մեծահասակ բնակիչների, այդ թվում՝ Մաշհադի խոսվածքով ստեղծագործող բանաստեղծ Ղասեմ Ռաֆիայի հետ զրույցների ընթացքում հավաքած նյութը, Խորասանի տարբեր խոսվածքներով գրված գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև Մաշհադի «Ֆերդոուսի» համալսարանում իրականացված հետազոտական աշխատանքները Խորասանի բարբառի վերացման պարագայում կարող են ուսումնասիրության աղբյուր հանդիսանալ իրանագետ-լեզվաբանների համար՝ նպաստելով իրանական բարբառագիտության մի շարք խնդիրների լուսաբանմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը գրելիս հիմնվել ենք բարբառների դասակարգման հետևյալ սկզբունքների վրա.

Ա. Աշխարհագրական (բարբառների խմբավորում՝ ըստ զբաղեցրած շրջանների):

Բ. Հնչյունական (բարբառների խմբավորում՝ ըստ հնչյունական որևէ օրինաչափության):

Գ. Ձևաբանական (բարբառների խմբավորում՝ ըստ ձևաբանական որևէ հատկանիշի):

Աշխատանքը շարադրված է նկարագրական մեթոդի կիրառմամբ՝ հաշվի առնելով հատկապես իրանական համեմատական լեզվաբանության մշակած մեթոդաբանական սկզբունքները:

Ուսումնասիրության մեջ օգտվել ենք իրանագիտական միջազգային տառադարձման համակարգից, որը նույնական է իրանական բոլոր լեզուների և բարբառների համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից՝ թվագրված ենթաբաժիններից, երեք գլխից (*Հնչյունաբանություն, Բառապաշարի համաժամանակյա և տարաժամանակյա քննություն, Ձևաբանություն*) և վերջաբանից:

Ատենախոսությանը կից ներկայացված է օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության որոշ դրույթներ ուսումնասիրվել ու առանձին հոդվածների տեսքով հրատարակվել են «Orientalia», «Կանթեդ» և «Արևելագիտության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուներում:

Աշխատանքը քննարկել ու պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը: Որոշ հարցեր էլ քննարկվել են իրանցի լեզվաբանների հետ:

ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Պարսկերենի բարբառային դասակարգման առաջին փորձը կատարել է Ռ. Ֆարհադին:¹⁶ Նա բարբառները բաժանել է երկու հիմնական խմբի՝ արևմտյան (Արևմտյան Իրանի պարսկերեն խոսվածքները) և արևելյան: Ֆարհադին արևելյան խումբն էլ իր հերթին բաժանել է երկու ենթախմբի՝ աֆղանատաջիկական բարբառախումբ և խորասանյան խոսվածքներ:

Ֆրանսիացի գիտնական Լազարն իր «Պարսից լեզուն» հոդվածում նշում է, որ որպես խոսակցական լեզու գործածվելով այն տարածքներում, որտեղ խոսում էին իրանական լեզուներով, պարսկերենին չհաջողվեց կայունացնել իր տեղը տեղական մյուս բարբառների շարքում:¹⁷

Այնուհետև, հին իրանական բարբառներից աստիճանաբար սկսում է առանձնանալ բարբառային նոր շերտ, որտեղ ընդգրկված բարբառներն անվանվեցին «պարսկերենի բարբառներ»:

Բացի այդ՝ մինչևոնդոլական շրջանի պարսկական արձակ տեքստերը վկայում են խոսվածքների երկու մեծ խմբերի գոյությունը, որոնք տարածվում են հարավից (Խուզեստան, Սիստան) մինչև հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տարածքներ (Խորասան, Մավերանահր, ժամանակակից Աֆղանստան):

Խոսակցական պարսկերենի տեղական տարբերակները բազմաթիվ են, սակայն ներկայում բնակչության միախառնման և ակտիվ հաղորդակցության հետևանքով դրանք հետզհետև անհետանում են:

Լազարը տարբերակում է պարսկերենի բարբառների երկու խումբ՝ արևմտյան և արևելյան. Իրանի Խորասան նահանգի խոսվածքները մտնում են արևելյան բարբառախմբի մեջ:

¹⁶ Farhadi, R. Le Persan parle en Afghanistan, Paris, Grammaire du Kāboli Accompagnee dun recueil de quatrains populaire de la Region de Kābol, 1955

¹⁷ Lazard. G. Le Persan, 288-289. (Rüdrieger Schmitt-Wiesbaden, Reichert 1989, Compedium, Linguarum, Iranicarum), Paris, 1989:

Ըստ Լազարի՝ արևելյան բարբառախմբում ընդգրկված բարբառներն արևմտյանի համեմատ ունեն հնչյունական և բառապաշարային որոշակի տարբերություններ: Հնչյունաբանության տեսակետից տարբերությունը պայմանավորված է արևելյան խմբի բարբառներում առկա դասական պարսկերենին բնորոշ **ō** և **ē** երկար հնչյունների առկայությամբ (Խորասանի բարբառում ևս առկա են այդ հնչյունները), իսկ արևմտյան խմբի բարբառներում՝ բառամիջի **-h-** հնչյունի սղմամբ և հնարավոր հորանջից խուսափելու նպատակով՝ **-y-** հնչյունի հավելմամբ:¹⁸

Գ Լ ՈՒ Ն Ա Ս Տ Ա Ջ Ի Լ
Հ Ն Չ Յ ՈՒ Ն Ա Ր Մ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ատենախոսության այս գլխում համաժամանակյա, մասամբ նաև տարաժամանակյա համեմատական քննության են ենթարկվել Խորասանի բարբառի և ժամանակակից պարսկերենի հնչյունական համակարգերը:

Խորասանի բարբառն ունի 8 ձայնավոր (**i, u, e, a, ā, o, ē, ō**) և 6 երկհնչյուն (**āi, ey, ow, aw, ay, oy**):

Չ Ա Յ Ն Ա Վ ՈՐ Ն ԵՐ

Առաջնալեզվային		Ետնալեզվային
Երկար	i ē	ā u ō
Կարճ	a e	o

Խորասանի բարբառի խոսվածքների (Ղուչանի, Մաշհադի, Քաշմարի, Թորբաթ-է Հեյդարիեի, Ֆերդոուսի, Ղայենի) բաղաձայնական համակարգը ընդհանուր առմամբ շատ քիչ է տարբերվում պարսկերենից: Խորասանի բարբառի բաղաձայնները հետևյալներն են՝ **b-p-f-g-x-k-h-y-q-d-t-j-č-z-s-š-ž-m-n-r-l-v-y**

ԵՐ Կ Հ Ն Չ Յ ՈՒ Ն Ն ԵՐ

Ֆերդոուսի խոսվածքում առկա են հետևյալ երկհնչյունները՝ **ow-jow**-«*գարի*», **aw-** *kawšēš-«նրա կոշիկը», ay-kayg-«թխվածք», ey-deyra-«դափ»* (նվազարան):

Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքի երկհնչյուններն են՝ **ay-say-«ջանք», ey-ney-«սրինգ», oy-čoy-«թեյ», ow- čow-«փայտ»:**

¹⁸ Lāzār Ž. (tarjome az Mortazavi M.) Lahje šenāsi-e zabān-e fārsi. (Az ruye motun-e qarn-e dahom va yāzdahom-e milādi), Našrieye dāneškadeye adabiāt-e Tabriz, Tabriz, 1961, šomārieye tābestān, pp. 129-145:

Քաշմարի խոսվածքում առկա են հետևյալ երկհնչյունները՝ - **ow-dow**-«*միջոցառում*», **ei-čei**-«*թեյ*», **āi-dāi**-«*պատ*»:

Ղուչանի խոսվածքի երկհնչյուններն են՝ - **ow-mou**-«*ես*» Ղայենի խոսվածք- **ow-gow**-«*կով*», **ei-vei**-«*նա*»:

**ԽՈՐԱՄԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՊԱՐՄԿԵՆԵՆԻ
ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԵՎ
ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի՝ Խորասանի բարբառի Ղուչանի և Ֆերդուսի խոսվածքներում գործածվում են **ē, ō, ā**, Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքում՝ **ē**, իսկ Մաշհադի խոսվածքում՝ **ō** երկար ձայնավորները:

Ֆերդուսի խոսվածքում **ay** երկհնչյունն ու **ē** երկար ձայնավորը սովորաբար բառավերջում չեն գործածվում:

Քաշմարի և Ղուչանի խոսվածքներում **e** կարճ ձայնավորը բառավերջում գործածվում է միայն հետևյալ բառերում՝ **ne**-«*ոչ*», **kame**-«*մի քիչ*», **xeile**-«*շատ*», **šambe**-«*շաբաթ*», **se**-«*երեք*», **hičče**-«*ոչինչ*», **hijje**-«*ոչ մի տեղ*», **harke**-«*յուրաքանչյուր ոք*»:

Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի՝ Խորասանի բարբառում վկայված են այնպիսի հնչյունական առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միջին պարսկերենին: Օրինակ, պարսկերենի բառավերջի **e** կարճ ձայնավորը միջին պարսկերենի **-ak** վերջավորության հնչյունափոխված ձևն է: Սկզբնական շրջանում սղվել է միայն **k** հնչյունը, իսկ այնուհետև **a** հնչյունը փոխվել է **e**-ի: Ըստ այդմ՝ ուսումնասիրության առարկա բարբառի Ղուչանի, Քաշմարի, Մաշհադի, Ֆերդուսի, Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքներում, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, բառավերջում վկայվում է միջին պարսկերենի **a** կարճ ձայնավորը:

Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի՝ միջին պարսկերենի **ē** երկար ձայնավորը պահպանվել է Ղուչանի, Մաշհադի և Ֆերդուսի խոսվածքներում, իսկ միջին պարսկերենի **ō** երկար ձայնավորը պահպանվել է միայն Ղուչանի խոսվածքում:

Հին պարսկերենի ***eš** և ***es** հնչյունակապակցությունները լեզվի պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են հնչյունական փոփոխությունների՝ համապատասխանաբար դառնալով **še** և **se**: Ֆերդուսի և Ղայենի խոսվածքներում վերոնշյալ հնչյունակապակցությունները նույն կերպ են գործածվում, ինչ հին պարսկերենում:

Միջին պարսկերենի I բաղաձայնը, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, Ղուչանի, Մաշհադի, Ֆերդոսի և Ղայենի խոսվածքներում պահպանել է իր գործածությունը, իսկ միջին պարսկերենի **p** բաղաձայնը, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, Ղուչանի և Մաշհադի խոսվածքներում պահպանվել է:

ՎԱՆԿ

Խորասանի բարբառում վանկը նվազագույնը կարող է ունենալ երկու, երեք կամ չորս հնչյուն:

Ուսումնասիրության առարկա բարբառի խոսվածքներում յուրաքանչյուր վանկ միշտ սկսվում է բաղաձայնով:

Խորասանի բարբառում վանկն ունի հետևյալ կազմը՝

Ձայնավոր **v**, բաղաձայն **c**

cv-mo-«եւ»

cvc-pur-«լիքը»

cvcc-čox-«առաստաղ

ՇԵՇՏ

Խորասանի բարբառում շեշտը հիմնականում ընկնում է բառի վերջին վանկի վրա: (օր. **doxta'r**-«աղջիկ», **divā'r**-«պատ»):

Հրամայական եղանակում շեշտը դրվում է **be-** հրամայական և **na-** ժխտական նախամասնիկների վրա. (օր. **'bopors**-«հարցրու »; **biriz**-«լցրու »; **nebin**-«մի՛ տես»):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐԱՍԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԵՎ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության սույն բաժնում ուսումնասիրված է մեր կողմից Իրանի Խորասան նահանգում կատարված դաշտային աշխատանքների ժամանակ հավաքած բառակույրը: Բառացանկը կազմված է ընտրողաբար. հիմնականում ներառում է Խորասանի բարբառին հատուկ շերտը, նկատի չեն առնվել այն բառերը, որոնք հնչյունական կազմով գրեթե նույնանում են ժամանակակից պարսկերենի համարժեք ձևերին:

Չին հայերենի բառապաշարում իրանական ծագում ունեցող բառերի թիվն անցնում է հազարից: Գրաբարի իրանական բառաշերտը որակապես տարբերվում է միջին հայերենի (նաև հայ բարբառների) իրանական բառաշերտից: Տարբեր են նաև գրաբարի և միջին հայերենի իրանական փոխառությունների աղբյուրները: Եթե միջին հայերենում փոխառության աղբյուրը նոր պարսկերենն էր, ապա գրաբարի իրանական տարրերը

ենթադրում են հին և միջին իրանական լեզուների զանազան աղբյուրներ, որոնց քննությունը կարևոր է լեզվի ուսումնասիրության տեսանկյունից:¹⁹ Համեմատության համար այդպիսի արժեքավոր նյութ է պարունակում Խորասանի բարբառը, որի ակտիվ բառապաշարում նկատել ենք բառեր՝ գործածական նաև հայերենի գրական ու բարբառային շերտերում (*dul-«դուլլ», bov-«բու», yoromdang -«խորամանկ», istow-«ինչպես», ververi-«շատախոս» [Արտաշատի խոսվածք]*):

Հաշվի առնելով, որ իսլամի ընդունումից հետո միջին պարսկերենն առավելապես տարածված է եղել Խորասանի տարածքում, ենթադրվում է, որ բառացանկում ներկայացված բառերի մի մասը հայերեն է թափանցել միջին պարսկերենից: Դա են հաստատում Լ. Հովհաննիսյանի «Հայերենի իրանական փոխառությունները» աշխատության մի շարք տվյալներ, օր.՝ «դոլլ» բառը նշված է հայերենի հին շրջանի իրանական փոխառությունների ցանկում:

Բառացանկում ընդգրկված բառերը քաղված են միայն մեծահասակների խոսքից, Խորասանում բնակվող երիտասարդների մեծամասնությունը, նախընտրելով ընդհանրական ձևեր, չի գործածում բարբառի հին շերտի բառեր: Շատ բառեր, որոնք տարբեր դարաշրջաններում պարսից լեզվի բառապաշարի մաս են կազմել, այսօր գրեթե դուրս են մղվել առօրյա գործածությունից, թեև դեռևս կենսունակ են Խորասանի խոսվածքներում:

Խորասանում կատարված դաշտային աշխատանքների ժամանակ հավաքած բառանյութը բաժանել ենք ըստ իմաստային խմբերի, քննել համաժամանակյա և տարաժամանակյա եղանակներով՝ մինևսյն ժամանակ համեմատելով հայերենի իրանական փոխառությունների հետ:

Այս բաժնում ներկայացվում են Խորասանի բարբառով գրի առնված տեքստային նմուշներ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում հանգամանալից ուսումնասիրել ենք խոսքի մասերը՝ Խորասանի բարբառի ձևաբանական համակարգը համեմատելով գրական պարսկերենի ձևաբանական համակարգի հետ: Բացի այդ՝ յուրաքանչյուր խոսքի մասի վերաբերյալ ներկայացրել ենք մեր նկատառումները:

¹⁹ Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, ԳԱԱ հրատ., Երևան, 1990թ., էջ 6:

Խորասանի բարբառում գոյականի որոշյալ առումն արտահայտելու համար բառավերջում ավելանում է **he** հնչյունակապակցությունը, էթե բառը վերջանում է **e** կամ **ā** հնչյուններով. (օր. **āqāhe**-«տղաները»; **khunehe**-«տները»):

Բացի վերոնշյալից՝ որոշյալ առումն արտահայտվում է նաև բառավերջում **a** հնչյունի համակցմամբ. (օր. **ketāba ku?**-«գիրքը որտե՞ղ է»):

Խորասանի բարբառում անորոշ առումն արտահայտվում է **yag** (մեկ) թվականի և **e** մասնիկի միջոցով. (օր. **Rezā yag māšine xerida**-«Ռեզան մի մեքենա է գնել»):

Եթե գոյականը վերջանում է ձայնավորով, ապա **e** հոդից առաջ ավելանում է **y** հնչյունը. (օր. **yag roqanjūšīye doros kerde**-«մի ռոդանջուշի (հացի տեսակ) է պատրաստել»):

Ուսումնասիրելով Խորասանի բարբառի անձնական դերանվան կազմությունը և այն համեմատելով գրական պարսկերենի հետ՝ նկատում ենք, որ ուսումնասիրության առարկա դարձած խոսվածքներում կցական անձնական դերանվան եզակի և հոգնակի թվերի առաջին դեմքերն ու հոգնակի թվի երկրորդ դեմքը նույն կերպ են կազմվում: Ի տարբերություն մյուս խոսվածքների՝ Քաշմարի խոսվածում եզակի թվի երկրորդ դեմքի կցական անձնական դերանունը կազմվում է **it** հնչյունափոխված տարբերակով:

Կցական անձնական դերանունը եզակի թվի և հոգնակի թվերի երրորդ դեմքում վերոնշյալ բոլոր խոսվածքներում նույն կերպ է արտասանվում՝ բացի Քաշմարի խոսվածքից, որտեղ եզ.թվում գործածվում է **iš** տարբերակը, իսկ հոգնակի թվում Ղայենի խոսվածքի կցական անձնական դերանունը գրեթե ամբողջությամբ տարբերվում է մնացյալ խոսվածքներից:

Ուսումնասիրության առարկա խոսվածքներում ինքնուրույն անձնական դերանունը եզակի և հոգնակի թվերում նույն կերպ է կազմվում: Ի տարբերություն մյուս խոսվածքների՝ Թորբաթ-է շեյդարիեի խոսվածքում հոգնակի թվի երրորդ դեմքը գործածվում է **šemā** հնչյունափոխված ձևով: Եթե եզակի թվի երրորդ դեմքը բոլոր խոսվածքներում նույնն է, ապա հոգնակի թվի երրորդ դեմքը յուրաքանչյուր խոսվածքում գրեթե յուրովի կազմություն ունի:

Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի՝ Խորասանի բարբառում անդրադարձ դերանունները ստացական հոդ են ստանում. (*հմմտ.*՝ ժ.պ. **man xod goftam** > *Խրս.բրբռ.* **mo xodom goftom**-«Ես ինքս ասացի»):

Ղայենի խոսվածքում, ի տարբերություն Խորասանի բարբառի մյուս խոսվածքների, գոյականի և ածականի ներքին կապը չի արտահայտվում իզաֆետի միջոցով:

Ֆերդոուսի խոսվածքում քսանմեկից մինչև իննսունինը թվականները, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, կազմվում են միավորի և տասնավորի միացմամբ, ընդ որում, միավորը լինում է նախադաս և տասնավորի հետ կապվում է առանց [o] հոդակապի:

Կոտորակային թվականի կազմության ժամանակ համարիչը (քանակական թվականը) հայտարարի (դասական թվական) նկատմամբ հետադաս դիրք է գրավում:

Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, որտեղ դասական թվականը կազմվում է տոկոս ցույց տվող և **sad**-«հարյուր» բացարձակ թվականից (նախ դրվում է այն թիվը, որը ցույց է տալիս տոկոսի չափը, ապա **sad**-ը), Քաշմարի խոսվածքում տոկոս ցույց տվող թվականը հետադաս դիրք է գրավում:

Քաշմարի խոսվածքում, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, բաշխական թվականները կազմվում են քանակական թվականների կրկնությամբ՝ **tā** մասնիկի համակցմամբ:

Ներկա ժամանակաձևի եզակի և հոգնակի թվերի 1-ին և 2-րդ դեմքերի վերջավորություններն ուսումնասիրության առարկա բոլոր խոսվածքներում համընկնում են՝ բացառությամբ Ֆերդոուսի խոսվածքի, որտեղ հոգ.թ. 1-ին դեմքը ստանում է **-am**:

Եզ.թ. 3-րդ և հոգնակի թ. 2-րդ դեմքերը նույնական են Մաշհադի, Քաշմարի և Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքներում, իսկ Ղայենիում և Ֆերդոուսիում եզ.թ. 3-րդ դեմքը համապատասխանաբար կազմվում է **-s**, **-e** և **-e** և **-ad**, իսկ հոգ.թ. 2-րդ դեմքը՝ **-ei** և **a** վերջավորություններով:

Անցյալի կազմության ժամանակ Թորբաթ-է Հեյդարիեի և Մաշհադի խոսվածքներում եզ.թ. 3-րդ դեմքը համապատասխանաբար ստանում է **-ek** և **-eg** վերջավորությունները, մնացյալ խոսվածքներում 3-րդ դեմքը վերջավորություն չի ստանում, իսկ որոշ դեպքերում՝ հնչյունի անկում է տեղի ունենում:

Բոլոր խոսվածքների եզակի և հոգնակի թվերի 1-ին և 3-րդ դեմքերը համապատասխանաբար կազմվում են **-om**, **-em** և **-an** վերջավորություններով՝ բացառությամբ Ֆերդոուսի խոսվածքում գործածվող որոշ բայերի, որոնց հոգ.թ. 3-րդ դեմքը ունենում է **-a** դիմային վերջավորությունը:

Ղայենի խոսվածքում հոգ. թ. 2-րդ դեմքում **-en**-ի փոխարեն բայը ստանում է **-ei**, իսկ Ֆերդոուսի խոսվածքում՝ **-a** դիմային վերջավորությունը: Իսկ եզ. թ. 2-րդ դեմքը, բացի Ֆերդոուսի խոսվածքից,

որտեղ որոշ բայեր ստանում են **-et** վերջավորությունը, բոլոր խոսվածքներում ստանում է **-i** դիմային վերջավորությունը:

Խորասանի բարբառի անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմությունը համեմատելով գրական պարսկերենի հետ՝ նկատում ենք, որ վերոնշյալ խոսվածքներում անցյալ կատարյալ ժամանակաձևի համար կիրառվող դիմային վերջավորությունները ենթարկվում են հնչյունափոխության:

Այսպես, Թորբաթ-է Հեղարիեի և Մաշհադի խոսվածքներում եզակի թվի երրորդ դեմքը համապատասխանաբար ստանում է **-ek** և **-eg** վերջավորությունները, մնացյալ խոսվածքներում երրորդ դեմքը վերջավորություն չի ստանում, իսկ որոշ դեպքերում հնչյունի անկում է տեղի ունենում:

Բոլոր խոսվածքների եզակի և հոգնակի թվերի առաջին և հոգնակի թվի երրորդ դեմքերը համապատասխանաբար կազմվում են **-om**, **-em** և **-an** վերջավորություններով՝ բացառությամբ Ֆերդոուսի խոսվածքում գործածվող որոշ բայերի, որոնց հոգնակի թվի երրորդ դեմքը ունենում է **-a** դիմային վերջավորությունը:

Ղայենի խոսվածքում հոգնակի թվի երկրորդ դեմքում **-en**-ի փոխարեն բայը ստանում է **-ei**, իսկ Ֆերդոուսի խոսվածքում՝ **-a** դիմային վերջավորությունը: Իսկ եզակի թվի երկրորդ դեմքը, բացի Ֆերդոուսի խոսվածքից, որտեղ որոշ բայեր ստանում են **-et** վերջավորությունը, բոլոր խոսվածքներում ընդունում է **-i** դիմային վերջավորությունը:

Ինչպես դասական պարսկերենում, այնպես էլ Ղայենի խոսվածքում անցյալ կատարյալի կազմության ժամանակ անցյալի հիմքին ավելանում է **bo-** նախամասնիկը: Բացի այդ՝ անցյալի հիմքում հնչյունի անկում է տեղի ունենում: Իսկ Ֆերդոուսի խոսվածքում անցյալ կատարյալի կազմության ժամանակ անցյալի հիմքին ավելանում է **be-** նախամասնիկը, սակայն որոշ բայերի անցյալ կատարյալ ժամանակը կազմվում է **var-** կամ **e-** նախածանցների հավելմամբ. այդ դեպքում բայի խոնարհումը տարբերվում է խոսվածքին հատուկ օրինաչափությունից:

Բացի վերը նշված քերականական շեղումներից և դիմային վերջավորություններում կատարված հնչյունափոխությունից՝ ուսումնասիրության առարկա խոսվածքներում անցյալ կատարյալի կազմության ժամանակ բայերը ենթարկվում են նաև այլ հնչյունական փոփոխությունների:

Պարսկերենի **šodan**-«դառնալ» բայը Խորասանի բարբառում անցյալ կատարյալ ժամանակում փոխվում է **raftan**-ի-«գնալ»:

Ապառնի ժամանակաձևի կազմության ժամանակ եզ.թ. և հոգ.թ. 1-ին և հոգ.թ. 3-րդ դեմքերը ուսումնասիրվող խոսվածքներում նույնական են՝

բացառությամբ Ֆերդոուսի խոսվածքի, որտեղ հոգ.թ. 2-րդ դեմքը ունենում է **-am** վերջավորությունը:

Եզ.թ. 2-րդ դեմքը բոլոր խոսվածքների համար նույնական է՝ բացառությամբ Թորբաթ-է Հեյդարիեի, որտեղ բայը ստանում է **-i** վերջավորությունը:

Եզ.թ. 3-րդ և հոգ.թ. 2-րդ դեմքերը բոլոր խոսվածքներում տարբեր ձևերով են կազմվում՝ բացառությամբ Մաշհադի և Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքների, որտեղ հոգ.թ. 2-րդ դեմքը նույն կերպ է կազմվում:

Ի տարբերություն գրական պարսկերենի, որտեղ ապառնի ժամանակը կազմվում է հիմնական բայի հատած անորոշ դերբայի և [**xāstan**-ուզենայ] բայի ներկայի հիմքի հարադրությամբ, Մաշհադի խոսվածքում այն կազմվում է [**xāstan**] բայի ներկա-ապառնի ժամանակաձևի և հիմք բայի աորիստ ժամանակաձևի հարադրությամբ:

Ղայենի խոսվածքում ապառնի կազմության ժամանակ եզակի թվում խոնարհվում է առաջին բաղադրիչը (**xāstan** բայը), իսկ իմաստակիր բայի հատած անորոշ դերբայը բոլոր դեմքերի համար մնում է անփոփոխ:

Հոգնակի թվում առաջին բաղադրիչը բոլոր երեք դեմքերի համար գործածվում է **xāstan** բայի [**bexē**] խոնարհված անփոփոխ ձևով, իսկ այս դեպքում հիմնական բայը խոնարհվում է:

Ի տարբերություն գրական պարսկերենի՝ Ֆերդոուսի խոսվածքում ապառնի ժամանակաձևը կազմվում է **xāstan** բայի ներկայի հիմքի և հիմնական բայի հատած անորոշ դերբայի հարադրությամբ, որտեղ **be-**նախամասնիկը և դիմային վերջավորությունները կցվում են **xāstan** բային:

Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքում ապառնին կազմվում է **xāstan** բայի ներկայի հիմքի հնչյունափոխված ձևի և անցյալի հիմքի համադրմամբ, որտեղ դիմային վերջավորությունները կցվում են ոչ թե **xāstan** բային, այլ հիմնական բային:

Ուսումնասիրվող խոսվածքներում անցյալ անկատար ժամանակում բայի վերջավորությունները նույնն են, ինչ անցյալ կատարյալ ժամանակում՝ բացառությամբ Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքի, որտեղ եզ.թ. 3-րդ դեմքում բայը խոնարհվելիս ստանում է ներկա-ապառնի ժամանակի դիմային վերջավորությունը:

Քաշմարի, Թորբաթ-է Հեյդարիեի և Մաշհադի խոսվածքներում վաղակատար ժամանակաձևով կազմված բայերը ձևով չեն տարբերվում անցյալ կատարյալից: Միակ տարբերությունն այն է, որ եզ.թ. 3-րդ դեմքը **-eg** դիմային վերջավորության փոխարեն ստանում է **-a** վերջավորությունը: Եթե անցյալ կատարյալի դեպքում շեշտը դրվում է բայահիմքի առաջին վանկի վրա, ապա վաղակատարի դեպքում բայական վերջավորությամբ կազմված վանկի վրա, և այն ավելի ձգված է արտասանվում:

Ի տարբերություն վերոնշյալ խոսվածքների՝ Ղայենի և Ֆերդոուսի խոսվածքներում վաղակատար ժամանակաձևը կազմվում է **be-** նախամասնիկի, անցյալ դերբայի և անցյալ ժամանակի դիմային վերջավորությունների կցմամբ:

Մաշհադի, Թորբաթ-է Հեյդարիեի և Քաշմարի խոսվածքներում դիմային վերջավորությունները նույնական են. Ղայենի խոսվածքում եգ.թ. 3-րդ դեմքը ստանում է **-ye**, իսկ հոգ.թ. 2-րդ դեմքը՝ **-ei** դիմային վերջավորությունը: Ֆերդոուսի խոսվածքում թե եզակի, և թե հոգնակի թվերում վաղակատարի դիմային վերջավորությունները տարբերվում են վերոնշյալ խոսվածքների ձևերից:

Մաշհադի խոսվածքում, ի տարբերություն Խորասանի բարբառի մյուս խոսվածքների, կիրառվում է նաև վաղակատար շարունակական ժամանակաձևը, որը կազմվում է անցյալ դերբայի, **mi-** նախամասնիկի հնչյունափոխված՝ **me-**, **mo-** և **mu-** տարբերակներով և բայ-հանգույցի կրճատ ձևերով:

Խորասանի բարբառում անցյալ վաղակատար ժամանակաձևում դիմային վերջավորությունները համընկնում են՝ բացառությամբ Ղայենի խոսվածքի, որտեղ բայը հոգ.թ. 2-րդ դեմքում ստանում է **-ei** վերջավորությունը: Մաշհադի և Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքներում բայը եգ.թ. 3-րդ դեմքում համապատասխանաբար ստանում է **-eg** և **-ek** դիմային վերջավորությունը, Քաշմարի խոսվածքում վերջավորություն չի ստանում, Ղայենիում անցյալի հիմքում հնչյունի անկում է տեղի ունենում:

Ինչ վերաբերում է Ֆերդոուսի խոսվածքին, ապա այստեղ անցյալ վաղակատար ժամանակաձևը կազմվում է **be-** նախամասնիկի, անցյալ դերբայի և **budan-**«լինել» բայի անցյալ կատարյալի ձևերի համադրմամբ: Ֆերդոուսի խոսվածքում, ի տարբերություն գրական պարսկերենի, խոնարհվում է ոչ թե **budan** բայը, այլ հարադրվում են անցյալի դերբայն ու կցական դերանունները:

Խորասանի բարբառի բոլոր խոսվածքներում ներկա շարունակական ժամանակաձևում ինչպես խոնարհվող բուն բայի, այնպես էլ **dāstan**՝ օժանդակ բայի դիմային վերջավորությունները նույնական են՝ բացառությամբ Ղայենի խոսվածքի, որտեղ բայը եգ. և հոգ.թ. 2-րդ դեմքում ստանում է **-ei** վերջավորությունը:

Ուսումնասիրության առարկա խոսվածքներում անցյալ շարունակական ժամանակաձևում ինչպես խոնարհվող բուն բայի, այնպես էլ **dāstan**՝ օժանդակ բայի դիմային վերջավորությունները նույնական են՝ բացառությամբ Ղայենի խոսվածքի, որտեղ բայը հոգ.թ. 2-րդ դեմքում ստանում է **-ei** վերջավորությունը:

Խոնարհվող բուն բայը Մաշհադի և Թորբաթ-է Հեյդարիեի խոսվածքներում եզ.թ. 3-րդ դեմքում համապատասխանաբար ստանում է – **eg** և **-ek** վերջավորությունները, իսկ Քաշմարում ոչ միայն վերջավորություն չի ստանում, այլև բայահիմքում տեղի է ունենում հնչյունի անկում:

Խորասանի բարբառում աորիստի կազմության ժամանակ բայի դիմային վերջավորությունները նույնն են՝ բացառությամբ Ղայենի խոսվածքի, որտեղ բայը հոգ. թ. 2-րդ դեմքում ստանում է **-ei** վերջավորությունը, իսկ Ֆերդոուսի խոսվածքում եզ.թ. 3-րդ դեմքը ստանում է **-ad**, իսկ հոգ.թ. 1-ին և 2-րդ դեմքերը համապատասխանաբար ստանում են **-am** և **-a** վերջավորությունները:

Անցյալ ենթադրականի կազմության ժամանակ այս խոսվածքներում բայի դիմային վերջավորությունները նույնն են՝ բացառությամբ Ղայենի խոսվածքի, որտեղ բայը հոգ. թ. 2-րդ դեմքում ստանում է **-ei** վերջավորությունը, իսկ Ֆերդոուսի խոսվածքում, ի տարբերություն գրական պարսկերենի, անցյալ դերբայը ստանում է անցյալ ժամանակի կազմության համար գործածվող դիմային վերջավորությունները, իսկ **budan** բայը եզ.թ. 3-րդ դեմքում ստանում է **-ad**, հոգ.թ. 1-ին և 2-րդ դեմքերում համապատասխանաբար ստանում է **-am** և **-a** վերջավորությունները:

Ուսումնասիրվող խոսվածքներում հրամակայական եղանակը կազմելիս հոգնակի թվում բայի դիմային վերջավորությունները նույնն են բացառությամբ Ղայենի և Ֆերդոուսի խոսվածքների, որտեղ բայը հոգ.թ. ստանում է համապատասխանաբար **-ei** և **-a** դիմային վերջավորությունները:

Եզրակացություններ. Խորասանի բարբառի ուսումնասիրությանը նվիրված սույն ատենախոսության մեջ առաջ քաշված հարցերն ամփոփելով և հիմնական նկատառումներն ի մի բերելով՝ կարող ենք եզրակացնել, որ գրական պարսկերենի հետ համեմատած՝ ուսումնասիրության ենթարկված Խորասանի բարբառի խոսվածքներում առկա են հնչյունաբանական և ձևաբանական մի շարք տարբերություններ:

Հնչյունաբանության ոլորտն ուսումնասիրելիս կարող ենք փաստել, որ Խորասանի բարբառում մի շարք հնչյուններ դեռևս պահպանել են միջին պարսկերենին բնորոշ հատկանիշներ, այնինչ դրանք ժամանակակից պարսկերենում այլևս վկայված չեն:

Բառապաշարն ուսումնասիրելիս նկատում ենք, որ կան միջին պարսկերեն բառեր, որոնք, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, լայն գործածություն ունեն Խորասանի բարբառում:

Ինչ վերաբերում է ձևաբանությանը, ապա Խորասանի բարբառում գրեթե բոլոր խոսքի մասերը ժամանակակից պարսկերենի համեմատությամբ դրսևորում են քերականական բազմաթիվ շեղումներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հոդվածներում.

1. **«Խորասանի բարբառի հնչյունական համարկարգը»**
«Orientalia» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010թ., էջ. 155-159:
2. **«Անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմությունը Խորասանի բարբառում»**
«Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, պրակ 4 (57), Երևան, 2013թ. էջ 134-137:
3. **«Ղայենի բարբառի ձևաբանության առանձնահատկությունները»**
«Orientalia» գիտական հոդվածների ժողովածու, պրակ 14, Երևան, 2013թ. էջ 147-156:
4. **«Անձնական դերանվան կազմությունը Խորասանի բարբառում»**
«Արևելագիտության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, պրակ 8, Երևան 2014թ. էջ 286-291:

АРМЕН ГРАЧИКОВИЧ ИСРАЕЛЯН

ХОРАСАНСКИЙ ДИАЛЕКТ

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности 10.02.06
«ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»

Защита состоится 23.02.2015 г., в 15.00 часов на заседании специализированного совета ВАК по лингвистике 019, действующего в Институте языка имени Гр. Ачаряна НАН РА. (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича, 15)

Темой диссертационного исследования выбраны говоры Гучана, Мешхеда, Торбат-и Гейдарие, Фердоуса, Кашмара и Кайена, распространенные с севера на юг, в диалектных центрах исторического Великого Хорасана (территория древней Парфии).

Актуальность темы диссертационного исследования заключается в том, что ряд фонетических и грамматических признаков свойственных древнеперсидскому и среднеперсидскому языкам, наличествуют в хорасанском диалекте современного персидского языка. Таким образом, комплексное описание и представление данного диалекта способствуют более точной классификации персидских диалектов, сравнительному исследованию иранских диалектов, обеспечивая ценный материал для сравнительного изучения древнеперсидского и среднеперсидского языков.

Целью данной работы является осуществление синхронного исследования на основе полевых материалов, собранных нами в иранской провинции Хорасан и исследовательских работ, проведенных в университете «Фирдоуси» в Мешхеде.

Кроме того, изучение лексики хорасанского диалекта может быть полезно для изучения иранских заимствований армянского языка, так как ряд диалектных слов, в отличие от современного персидского, используются в диалектах армянского языка.

При написании диссертации основывались на географических, фонетических и морфологических принципах классификации диалектов. Работа состоит из введения, трех глав и заключения.

В первой главе диссертации (*Фонетика*) синхронному, а также частично диахроническому сравнительному изучению подверглись

фонетические системы хорасанского диалекта и современного персидского языка.

Диалект Хорасана имеет 8 гласных (*i, u, e, a, ā, o, ē, ō*) и 6 дифтонгов (*āi, ey, ow, aw, ay, oy*). Система согласных в целом мало чем отличается от системы согласных персидского языка (*b-p-f-g-x-k-h-y-q-d-t-j-č-z-s-š-ž-m-n-r-l-v-y*).

В отличие от современного персидского языка в говорах Хорасанского диалекта Гучани и Фердоус используются *ē, ō, â*, в говоре Торбат-и Гейдария *ē*, а в говоре Мешхеда *ō* длинные гласные.

Звуковые сочетания древнеперсидского **eš* и **es* в течение исторического развития языка претерпели существенные фонетические изменения трансформировавшись в *še* и *se*.

В отличие от современного персидского языка, среднеперсидская долгая гласная *ē* сохранилась в говорах Гучана, Мешхеда и Фердоус, а долгая гласная среднеперсидского *ō* сохранилась только в говоре Гучана.

Среднеперсидские согласные *l* и *p*, в отличие от современного персидского, используются в говорах Гучана, Мешхеда, Фердоус и Кайена.

Во второй главе диссертации (*Синхронное и диахронное изучение диалектной лексики Хорасана*), при анализе лексики хорасанского диалекта было замечено, что на территории Хорасана все еще используется множество среднеперсидских слов, которые в современном персидском языке либо не используются, либо используются в фонетически измененных формах.

Изучение лексики хорасанского диалекта может быть полезным также при исследовании иранских заимствований армянского языка, поскольку в указанном диалекте существует ряд слов, которые используются также в диалектах армянского языка.

В этом разделе также представлены текстовые образцы, написанные на хорасанском диалекте.

В третьей главе (*Морфология*) мы изучим части речи, сравним морфологические системы хорасанского диалекта с морфологической системой литературного персидского языка. Кроме того, относительно развития каждой части речи сделаны соответствующие выводы.

В говоре Кайена, в отличие от других говоров Хорасанского диалекта, внутренняя связь существительного и прилагательного выражается не с помощью изафета. Неопределенный артикль выражается с помощью числительного *yag* (один) и частицы *e*.

В отличие от современного персидского языка, в хорасанском диалекте притяжательные местоимения получают притяжательный артикль (ср.

современный персидский *man xod goftam* > *mo xodom goftom* хорасанского диалекта «я сам сказал»).

В говоре Фердоус числительные 21-99 образуются соединением единицы и десятки, кроме того, единица бывает препозитивной и сочетается с десяткой без соединительного гласного [o].

В говоре Мешхеда будущее время образуется при помощи сочетания настоящего будущего времени глагола [xāstan] и основы глагола в аористе (сослагательном наклонении), а в говоре Кайена, в случае множественного числа как первый компонент для всех трех лиц используется склоненный вариант глагола **xāstan** в неизменном виде [bexɛ], а в этом случае основной глагол склоняется.

В говоре Фердоус будущее время образуется сочетанием презентной основы и усеченной формы основного глагола, где префикс **be-** и личные окончания присоединяются к глаголу **xāstan**.

В говоре Торбат-и Гейдария будущее время образуется при помощи сочетания фонетически измененной основы настоящего времени глагола **xāstan** и основы прошедшего времени основного глагола, где личные окончания прибавляются не к глаголу **xāstan**, а к основному глаголу.

При образовании прошедшего времени в говорах Торбат-и Гейдария и Мешхеда 3-е лицо ед. ч. соответственно получает окончания **-ek** и **-eg**, в других говорах 3-е лицо не получает окончания, а в некоторых случаях происходит стяжение фонемы.

Как в классическом персидском языке, так и в говоре Кайена при образовании прошедшего совершенного времени к основе прошедшего времени прибавляется префикс **bo-**.

Глагол персидского языка **šodan** «становиться» в Хорасанском диалекте в прошедшем совершенном времени меняется на **raftan** «идти».

В «*Заключении*» диссертации подводятся главные итоги работы.

ARMEN H.ISRAYELYAN

The Khorasan Dialect

A thesis for PhD degree in Philology, speciality 10.02.06,
“The Ancient and Modern Languages of Asia (Iranian languages)”.

The defence will take place on 23.02.2015 at 15:00 at the session of Specialized Council on Linguistics 019 of HAC in the Institute of Language after Hrachya Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia (Address: Grigor Lusavorich street, 15, 0015 Yerevan, Armenia)

SUMMARY

The subject of the dissertation is the analysis of idiomatic centers, dialects of the historic Great Khorasan (ancient Parthia area), that stretch from north to south: Ghuchan, Mashhad, Torbat Heydariyeh, Ferdous, Kashmar, and Ghayen. The novelty of research is largely determined by the fact that Old and Middle Persian (Farsi) have typical phonetic and grammatical features of a specific dialect (vernacular) of Khorasan. This being the case, the comprehensive study of the Khorasan dialect will contribute to further classification of the Persian dialects, serve as a useful reference for the comparative analysis of Iranian dialects, as well as provide a valuable source for Old and Middle Persian research at large. The overriding objective of this dissertation is to conduct simultaneous study of Khorasan dialect based on the field research data collected in Iran's Khorasan province as well as research conducted by the Mashhad "Ferdowsi" University.

The research material will not only contribute to the study of the Old and Middle Persian, but it will also be useful in the study of words of Armenian-Iranian origin and Armenian dialectological study.

The subject of the dissertation is based on the classification of geographical dialects, phonetic and morphological principles.

The dissertation consists of an introduction, three chapters, and a conclusion.

The first chapter of the thesis (*Phonetics*) presents a synchronous and partially asynchronous comparative examination of the Khorasan dialect and Modern Persian sounds.

The Khorasan dialect has 8 vowels (i, u, e, a, ā, o, ē, ō) and 6 diphthongs (*āi, ey, ow, aw, ay, oy*). The system of consonants as a whole is slightly different from that of Persian (Farsi): (*b-p-f-g-x-k-h-y-q-d-t-j-č-zs-š-ž-m-n-r-l-v-y*):

Unlike modern Persian, Khorasan vernaculars of Ferdous and Ghuchan use ē, ō, â, in the vernacular of Torbat Heydariyeh ē is used, while in Mashhad dialect ō long vowel is used.

The Old Persian *eš and *es sound combinations have undergone phonetic changes during the historical development of the language and, as a consequence, have transformed into še and se respectively.

Unlike Modern Persian, the long vowel ē in Middle Persian is preserved in Ghuchan, Mashhad and Ferdousi dialects; whereas the long vowel ō of the Middle Persian is preserved only in Ghuchani dialects. The l and p consonants of the Middle Persian, as opposed to Modern Persian, have preserved their use in Ghuchan, Mashhad, Ferdousi, Ghayen dialects.

The second chapter, (*The synchronous and asynchronous study of Khorasan dialect vocabulary*) focusing on the analysis of Khorasan dialect vocabulary, reveals the usage of many words of the Middle Iranian in Khorasan area which are no longer used in Modern Persian or have undergone phonetic changes.

The study of Khorasan dialect vocabulary may be useful in the study of Armenian dialectology and the Armenian-Iranian borrowings, given the usage of a number of dialect words in Armenian dialects.

This section also presents textual samples of the Khorasan dialect.

The third chapter (*Morphology*) conducts a detailed examination of parts of speech, namely, the morphological system of Khorasan dialect as compared with literary Persian. In addition, we present our considerations on each part of speech.

Unlike other dialects in Khorasan, the inner link of nouns and adjectives in Ghayen dialect is not expressed through izafet. The indefinite is expressed through the yag (a) numerical and e particle. Unlike in Modern Persian, the reflexive pronouns in Khorasan dialect acquires a possessive article. (*Persian: man xod goftam* > *Khorasan dialect: mo xodom goftom* - «I told myself»):

In the Ferdous dialect, numbers from twenty-one to ninety-nine are formed by the fusion of the unit and one tenth. Moreover, the unit is to be **prepositive**. The fusion with one tenth is formed without [o] participle.

In the Mashhad vernacular, the future tense is formed by [xāstan] present-future verb and aorist verb base combination, whereas in the Ghayen dialect the first component of the plural used for all three pronouns is the *xāstan* verb conjugated to [bexɛ] unchanged form, and in this case, the main verb is conjugated.

In the Ferdous vernacular, the future tense is formed by the verb *xāstan* in the present tense and its combination with the infinitive of the main verb, where prefix **be-** and endings are attached to the /*xāstan*/ verb.

In the Torbat Heydariyeh vernacular, the future tense is formed by the *xāstan* verb with the combination of phonetically changed present base form of the past and the main base of the infinitive verb, where the endings are not attached to the *xāstan* verb, but to the main verb.

The past tense in the Torbat Heydariyeh and Mashhad vernaculars is formed through the singular third person acquiring **-ek** and **-eg** endings respectively.

In both classical Persian and Ghayen dialects, the formation of the past perfect tense is achieved through the addition of prefix **bo-** to the verb in the past.

The verb *šodan* "to become" in Persian changes to *raftan* "to go" in the past perfect tense of the Khorasan dialect.

The conclusion summarizes the main hypotheses by presenting our observations on each chapter.